ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ անդամների ընդհանուր ժողովի
16/01/2015թ թիվ 8-Լ որոշմամբ
Փոփոխված է
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ անդամների ընդհանուր ժողովի
20/04/2017թ թիվ 1-Լ որոշմամբ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ անդամների ընդհանուր ժողովի նախագահ

---------- Ներսես Երիցյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

(վերջին փոփոխությունը
գրանցված է)
ՀՀ կենտրոնական բանկում

«24» մայիսի 2017թ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____ Արթուր Ջավադյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-012

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ

(ԱՄՄՊ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆԸ ՆՈՐ ԱՆԴԱՄԱԿՑԱԾ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՄՄՊ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՆԱԼՈՒ ՄՈՒՏՔԻ ՎՃԱՐԻ)

ԵՐԵՎԱՆ - 2017

1. «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ (այսուհետ՝ Բյուրո) կանոնադրությամբ նախատեսված պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) հիման վրա մատուցված «Տրանսպորտային միջոցների միասնական պատուհան» ("VSW") ծառայության (այսուհետ՝ ծառայություն) պարտադիր մասի դիմաց վճարումը կատարվում է Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունների կողմից՝ ծառայություն մատուցող անձի կողմից ներկայացված վճարի գումարը նրանց միջև հետևյալ բանաձևի հիման վրա բաշխելու միջոցով.

$$ՎՃ_{ij}=ՄԲ_{ij}*ՎԳ_{j}$$

Որտեղ՝

$ՎՃ_{ij}$-ն Բյուրոյի անդամ i-րդ ապահովագրական ընկերության կողմից ծառայության մատուցման j-րդ ամսվա համար կատարվող վճարի մեծությունն է,

$ՎԳ_{j}$-ն ծառայություն մատուցող անձի կողմից Բյուրո ներկայացված ծառայության մատուցման j-րդ ամսվա համար վճարի գումարն է, որը նվազեցվում է Բյուրոյին նոր անդամակցած ապահովագրական ընկերության կողմից այդ ամսվա ընթացքում փաստացի վճարված Պայմանագրին միանալու մուտքի վճարի չափով: Ընդ որում, մուտքի վճարը ծառայության մատուցման j-րդ ամսվա համար վճարի գումարից մեծ լինելու դեպքում տարբերության գումարի չափով նվազեցվում է նաև ծառայության մատուցման j-րդ ամսվան հաջորդող ամսվա համար վճարի գումարը,

$ՄԲ_{ij}$-ն ծառայության մատուցման j-րդ ամսվա համար վճարի գումարում Բյուրոյի անդամ i-րդ ապահովագրական ընկերության մասնաբաժինն է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով և կլորացվում է դեպի վերև մինչև հազարերորդական նիշ՝ կլորացման նիշ ընդունելով հինգ հազարերորդական մեծությունը.

$$ՄԲ_{ij}=\left(\frac{ՎԱ_{ij}}{ՎԱ_{ընդ.}}\right)$$

Որտեղ՝

$ՎԱ_{ij}$-ն i-րդ ապահովագրական ընկերության կողմից ծառայության մատուցման j-րդ ամսվան նախորդող ամսվա ընթացքում վաստակած ապահովագրավճարի մեծությունն է (իսկ բոլոր ապահովագրական ընկերությունների կողմից այդ ամսվա ընթացքում վաստակած ապահովագրավճարների մեծությունը զրոյի հավասար լինելու դեպքում՝ այդ ամսվան նախորդող ամսվա ընթացքում վաստակած ապահովագրավճարի մեծությունը), որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ՎԱ_{ij} = ՀԱ_{ij} - Վ_{ij} - ՉԱՊ_{փոփ.}$$

Որտեղ՝

$ՀԱ_{ij}$ – i-րդ ապահովագրական ընկերության համար դիտարկվող ամսվա հաշվեգրված ապահովագրավճարի մեծությունն է,

$Վ_{ij}$ - i-րդ ապահովագրական ընկերության համար դիտարկվող ամսում հետ վերադարձված ապահովագրավճարների մեծությունն է,

$ՉԱՊ_{փոփ.}$- i-րդ ապահովագրական ընկերության համար դիտարկվող ամսվա վերջին և տվյալ ամսվան նախորդող ամսվա վերջին օրվա դրությամբ չվաստակած ապահովագրավճարների պահուստի տարբերությունն է:

$ՎԱ_{ընդ.}$-ն պահանջը ներկայացնելու օրվա դրությամբ Բյուրոյի անդամ բոլոր ապահովագրական ընկերությունների կողմից ծառայության մատուցման j-րդ ամսվան նախորդող ամսվա ընթացքում վաստակած ապահովագրավճարների մեծությունն է, իսկ այն զրոյի հավասար լինելու դեպքում՝ այդ ամսվան նախորդող ամսվա ընթացքում վաստակած ապահովագրավճարների մեծությունը:

$$ՎԱ_{ընդ.} = ՀԱ_{ընդ.} - Վ_{ընդ.} - ՉԱՊ_{փոփ.}$$

Որտեղ՝

$ՀԱ_{ընդ.}$ – բոլոր ապահովագրական ընկերությունների համար դիտարկվող ամսվա հաշվեգրված ապահովագրավճարների մեծությունն է,

$Վ_{ընդ.}$ - բոլոր ապահովագրական ընկերությունների համար դիտարկվող ամսում հետ վերադարձված ապահովագրավճարների մեծությունն է,

$ՉԱՊ_{փոփ.}$- բոլոր ապահովագրական ընկերությունների համար դիտարկվող ամսվա վերջին և տվյալ ամսվան նախորդող ամսվա վերջին օրվա դրությամբ չվաստակած ապահովագրավճարների պահուստի տարբերությունն է:

2. Բյուրոյին նոր անդամակցած ապահովագրական ընկերության կողմից վճարման ենթակա Բյուրոյի կանոնադրությամբ նախատեսված Պայմանագրին միանալու մուտքի վճարը հաշվարկվում է հետևյալ բանաձևի հիման վրա.

«*ՄՄՎk=ՎԳտ/ԱԸք*

Որտեղ՝

ՄՄՎk-ն ծառայության մատուցման k-րդ ամսում Բյուրոյին անդամակցած ապահովագրական ընկերության կողմից վճարման ենթակա Պայմանագրին միանալու մուտքի վճարի չափն է,

ՎԳտ-ն ծառայության մատուցման k-րդ ամսվան նախորդող օրացույցային տարվա ընթացքում մատուցված ծառայության, իսկ նախորդ օրացուցային տարվա ընթացքում ծառայություն մատուցված չլինելու դեպքում՝ տվյալ օրացուցային տարվա ընթացքում մատուցված ծառայության համար Բյուրո ներկայացված ամսական վճարների ընդհանուր չափն է:

ԱԸք-ն մատուցվող ծառայությունից օգտվող ապահովագրական ընկերությունների քանակն է՝ ներառյալ նոր ընկերությունը:

3. Ապահովագրական ընկերությունը սույն կանոնների 1-ին կետով սահմանված վճարումը կատարում է Բյուրոյի կողմից համապատասխան պահանջը ներկայացնելուց հետո երեք օրացույցային օրվա ընթացքում՝ պահանջում նշված բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

4. Բյուրոն ծառայության մատուցման համար վճարի չափը իր անդամ ապահովագրական ընկերություններին է ներկայացնում ծառայություն մատուցողից դրա մասին տեղեկանալուց հետո՝ մեկ օրացույցային օրվա ընթացքում:

5. Բյուրոյի կանոնադրությամբ նախատեսված Պայմանագրին միանալու մուտքի վճարը վճարվում է համապատասխան ապահովագրական ընկերության՝ Բյուրոյին անդամակցելու օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. Սույն կանոնների 3-րդ կամ 5-րդ կետով սահմանված պարտականությունը խախտելու դեպքում խախտում թույլ տված ապահովագրական ընկերությունից յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար գանձվում է տույժ՝ չվճարված գումարի 0.1 տոկոսի չափով: